## ԳՐՈՀԱՅԻՆ ՎԱՇՏԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
## (Տարբերակ)

Ժամանակակից զինված հակամարտությունները անողոք տրամաբանությամբ ստիպում են հակամարտող կողմերի հրամանատարությանը, իրենց առջև ծառացած խնդիրների լուծման համար, դիմել մասնագիտացված գործիքակազմի ստեղծմանն ու կիրառմանը: Հենց այդպիսի արդյունավետ գործիքակազմ է գրոհային մարտավարական խումբը, որը վաղ ժամանակներից ապացուցել է իր արդյունավետությունը:

Գրոհային վաշտը, համահավաք, բարձր անկախությամբ համազորային մարտավարական ստորաբաժանում է, որն ժամանակավորապես ստեղծվում է ստորաբաժանումների հաստիքացուցակից դուրս՝ հատկապես բարդ մարտական առաջադրանքներ կատարելու ժամանակ անհապաղ (օպերատիվ) կիրառման համար:

Վաշտի կազմն ունի ճկուն կառուցվածք՝ կախված ստացված մարտական առաջադրանքից, իրավիճակի պայմաններից, տեղանքի բնույթից և այլ գործոններից, այն համալրվում է «հատուկ կոնտինգենտի» թվից:

## Ընդհանուր դրույթներ

**Վաշտի ստեղծման նպատակը և խնդիրները**

Ստեղծվում է ռեզերվի գրոհային հարվածային ջոկատների և մանների ուժեղացման, ինչպես նաև ռազմական օպերացիայի ընթացքում մարտական խնդիրները կատարելու նպատակով:

Հատուկ կոնտինգենտի զինծառայողների թվում գրոհային վաշտի թվաքանակը կազմելու է մինչև 100 զինծառայող, ինչը զգալիորեն մեծացնելու է ստորաբաժանման գրոհային և մարտական հնարավորությունները:

**Խնդիրները**

- հաջող մարտական (հատուկ) գործողությունների իրականացում քաղաքում (բնակավայրում), բարդ աշխարհագրական պայմաններ ունեցող վայրում,
- առանձին առավել կարևոր օբյեկտների (հենակետեր, ղեկավարման կետեր, կապի հանգույցներ, շենքեր, շինություններ և այլն), հարձակման օբյեկտի (թաղամաս, շենք) կամ դրա մի մասի, տեղանքի (տարածքի) հատվածի գրավում,
- հակառակորդի վերահսկողության տակ գտնվող տարածքներում դիվերսիոն գործողությունների իրականացում,
- հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի որոնում և ոչնչացում,
- կառույցների արգելափակում և հակառակորդի ոչնչացում,
- հրետանային կրակի ճշգրտում,
- նոր հայտնաբերված թիրախները ոչնչացնելու համար ավիացիայի ուղղորդում:

**Գրոհային վաշտի մարտակարգը կարող է բաղկացած լինել**

- գրոհային խմբից,
- ամրացման և մաքրման խմբից,
- ռեզերվի խմբից,

(տվյալ կազմավորումների գործառույթները կատարում են գրոհային վաշտի յուրաքանչյուր խումբ, որը հերթափոխվում է 3 օր մեկ),

- հետախուզական խմբի գործունեությունն ուղղված է հակառակորդի և նրա սպառազինության որոնմանն ու ոչնչացմանը մինչև 3 կմ մարտավարական խորությամբ, այդ թվում՝ հրետանու կրակի ճշգրտման, ավիացիայի ուղղորդման միջոցով,
- ինժեներասակրավորային ջոկից, որը հրամանատարի որոշմամբ կարող է տրվել գրոհային խմբերին որպես ուժեղացում:

**Գրոհային վաշտի հիմնական սպառազինությունը** հրաձգային զենքերն ու նռնականետերն են:

Վաշտի թվաքանակը կազմում է մինչև 100 մարդ:

1. **Վաշտի վարչակազմը՝ 2 զինծառայող**.

- վաշտի հրամանատար,
- վաշտի հրամանատարի տեղակալ բարոյահոգեբանական ապահովման (նախկին ԱՀՏԱ) գծով,

**2. ԱԹՍ-ների հաշվարկ՝ 2 զինծառայող.**

- հաշվարկի պետ,
- ԱԹՍ օպերատոր,

**3. Չորս գրոհային խմբեր՝ 80 զինծառայողներով, յուրաքանչյուրում 20 զինծառայող, որոնք բաղկացած են.**

**զավթող ջոկից՝ 10 զինծառայող.**
- խմբի հրամանատար՝ 1 զինծառայող,
- նռնակաձիգ՝ 1 զինծառայող,
- հրաձիգ-նռնակաձիգի օգնական՝ 1 զինծառայող,
- գնդացրորդ՝ 1 զինծառայող,
- հրաձիգ գնդացրորդի օգնական՝ 1 զինծառայող,
- ԱԹՍ-ների ջոկի հրամանատար՝ 1 զինծառայող,
- հրաձիգ-սանիտար՝ 1 զինծառայող,
- հրաձիգ-ականազերծող՝ 1 զինծառայող,
- հրաձիգ-ռադիոհեռախոսավար՝ 1 զինծառայող,
- հրաձիգ-վարորդ՝ 1 զինծառայող,

**կրակային աջակցության ջոկից՝ 10 զինծառայող**
- ջոկի հրամանատար-ՀԱՀ (АГС) նշանառու՝1 զինծառայող,
- նշանառու (ՀԱՀ)՝ 1 զինծառայող,
- հաշվարկի համար (ՀԱՀ)՝ 2 զինծառայող,
- գնդացրորդ՝ 2 զինծառայող,
- հաշվարկի համար (վարորդ)՝ 1 զինծառայող,
- հաշվարկի համար՝1 զինծառայող,
- դիպուկահար՝ 2 զինծառայող:

4. **Ինժեներասակրավորային ջոկ՝ 5 զինծառայող.**
- ջոկի հրամանատար՝ 1 զինծառայող,
- ավագ սակրավոր՝ 1 զինծառայող,
- ականազերծող՝ 2 զինծառայող,
- վարորդ՝ 1 զինծառայող:

**5. Հետախուզական խումբ՝ 8 զինծառայող.**
- ջոկի հրամանատար՝ 1 զինծառայող,
- ավագ հետախույզ՝ 1 զինծառայող,
- հետախույզ կապավոր՝ 1 զինծառայող,
- հետախույզ նռնակաձիգ՝1 զինծառայող,
- հետախույզ գնդացրորդ՝ 1 զինծառայող,
- հետախույզ դիպուկահար՝ 1 զինծառայող,
- հետախույզ-ճշտորդ՝ 1 զինծառայող,
- վարորդ՝ 1 զինծառայող:

**6. Բժշկական տարհանման ջոկ՝ 3 զինծառայող.**
- ջոկի հրամանատար՝ 1 զինծառայող,
- սանիրահանգիչ՝ 1 զինծառայող,
- վարորդ սանիտար՝ 1 զինծառայող:

## Ստորաբաժանման պատրաստումը

Վաշտի մարտական լիաներդաշնակման համար անհրաժեշտ ժամանակը 10-ից 15 օր է, որը պետք է իրականացնել երեք փուլով:

**Առաջին փուլը** անհատական պատրաստությունն է, որը հիմնականում ուղղված է անձնակազմի հաստիքային զենքերը պատրաստելու և կիրառելու հմտությունների վերականգնմանը, դրանք նորմալ մարտի բերելուն, դաշտում, բնակավայրերում ինքնուրույն մարտ վարելուն, երթի ընթացքում ինքնաօգնության ու

փոխօգնության ցուցաբերմանը, թաքստոցների սարքավորմանն ու քողարկմանը, հետախուզական և կապի միջոցների կիրառմանը, արտահաստիքային ԱԹՍ-ների (քվադրոկոպտերների) օպերատորների պատրաստմանը, ականների, ձգալարերի տեղադրմանը (ականազերծմանը):

**Երկրորդ փուլը** ջոկի կազմով լիաներդաշնակումն է: Հիմնական ուղղվածությունը համարվում է զինծառայողների համատեղ գործողությունները մարտական երկյակների, եռյակների, ջոկի կազմում, ինքնօգնությունն ու փոխօգնությունը, փոխադարձ կրակային պաշտպանությունը, ռադիոհաղորդումների վարումը, երթի (տեղաշարժման) ընթացքում համատեղ ներդաշնակված գործողությունների նախապատրաստումը, բնակավայրը գրոհելիս հենակետին տիրանալը, ձեռք բերված բնագիծում ամրանալը (դիրքում տեղավորվելը):

**Երրորդ փուլը** դասակի կազմով լիաներդաշնակումն է, որի ընթացքում հիմնական ուշադրության պետք է կենտրոնացնել հարձակման ժամանակ դասակի գործողությունները վարելու նախապատրաստմանը, երթի ընթացքում ներդաշնակ համատեղ գործողությունների նախապատրաստմանը (տեղաշարժմանը), բնակավայրը գրոհելիս հենակետին տիրանալուն, ձեռք բերված բնագիծում ամրանալուն (դիրքերում տեղավորվելուն):

## Պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները

**Գրոհային ջոկատների հրամանատարները**, որոնց տրամադրության տակ են գտնվում գրոհայինները՝

- լրիվությամբ պատասխանատու են հաշվառման, հատուկ առաջադրանքների առկայության և կատարման համար: Պատասխանատվությունը սկսում է գործել անձնակազմի փոխանցման պահից,
- պարտավոր են պահպանել զինվորական կարգապահությունը,
- կարգապահության և կարգուկանոնի վերականգնման համար, բացահայտ անհնազանդության դեպքում, մարտական պայմաններում, երբ անհնազանդության գործողություններն ակնհայտորեն ուղղված են մարտական խնդիրը կատարելուց հրաժարվելուն, մարտական դիրքերն ինքնակամ լքելուն իրավունք ունեն զենք կիրառել,
- իրավունք ունեն քրեական պատասխանատվության ենթարկել անհրաժեշտ գործողություններ կատարելու համար հանձնված գույքը դիտավորությամբ ոչնչացնելու, կորցնելու կամ վնասելու դեպքում,
- պարտավոր են ապահովել նյութատեխնիկական գույքով և հատուկ միջոցներով,
- առաջադրված խնդիրները հաջող իրականացման նպատակով պարտավոր են կազմակերպել լրացուցիչ պատրաստության անցկացում:

**Գրոհայինները պարտավոր են.**

- կառուցվածքային ստորաբաժանման կազմում ճշգրիտ կատարել հրամանատարներից կամ նրանց տեղակալներից ստացված ցուցումները և սահմանված ժամկետներում անհրաժեշտ գործողությունները,
- խստորեն պահպանել հրամանատարների կողմից սահմանված անվտանգության միջոցառումները, զինվորական կարգապահության, ներքին կարգ ու կանոնի և վարքագծի կանոնները;

• ձեռնարկել ողջամիտ միջոցներ խնդիրների կատարման նպատակով իրենց հանձնված զույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը կանխելու համար:

## Բժշկական ապահովում

Վիրավոր և հիվանդ զինծառայողներին բուժօգնություն ցուցաբերվում է զորամասերի բժշկական ստորաբաժանումների ուժերով:

Բժշկական օգնության ծավալը սահմանվում է.

- ռազմի դաշտում՝ առաջին օգնության, ինքնօգնության և փոխօգնության ծավալով,
- բուժկետում՝ առաջին բժշկական օգնություն՝ անհետաձգելի ցուցումներով,
- բժշկական հաստատություններում՝ մասնագիտացված և բարձր տեխնոլոգիական օգնություն:

Վիրավորների տարհանումն իրականացվում է բժշկական տարհանման ուղիներում տեղակայված զորամասերի բուժկետերի ուժերով: Բուժհաստատություններում ռազմական ոստիկանության ուժերով կազմակերպվում է վիրավոր զինծառայողների պաշտպանությունը:

Բուժհաստատություններում զինծառայողների տվյալների հաշվառումը կատարվում է ըստ զինծառայողների անձնական ժետոնների:

## Նյութատեխնիկական ապահովում

Անձնակազմի կաթսայական բավարարման նշանակումը կամ կաթսայական բավարարումց հանումը իրականացվում է գրոհայինների անձնական զեկուցագրերի հիման վրա:

Գրոհայինների իրային ապահովումն իրականացվում է սահմանված կարգով՝ միավորումների և զորամասերի պահեստներում պահվող գույքի հաշվին, ըստ զինծառայողների մատակարարման նորմերի:

Գրոհայիններին տրված գույքի հաշվառումը պետք է իրականացվի առանձին, հանձնումը իրականացվում է ըստ առանձին բաշխման ամփոփագրի:

Զոհված (մահացած) գրոհայինների մարմինների տարհանումն իրականացվում է առողջապահության նախարարության դիահերձարան կամ դիահերձարան ունեցող բուժհաստատություն, որտեղից հետագայում հարմարեցված տրանսպորտով տեղափոխվում է համապատասխան վայր :

Բժշկական հաստատությունների դիահերձարաններում զոհվածների (մահացածների) մարմինների պահպանումը, մինչև դրանց տարհանումը, իրականացվում են զոհված (մահացած) զինծառայողների մարմիններից առանձին:

Զոհված (մահացած) գրոհայինների հաշվառումը վարել առանձին գրքերում:

Գրոհային ջոկատներին հրաձգային զենքով ապահովումն իրականացնել զինանոցներից և պահեստներից՝ սահմանված կարգով: Եթե մատակարարումը հնարավոր չէ ապահովվել մատակարարի միջոցների հաշվին, ապա հրաձգային զենքի և մերձամարտի միջոցներով ապահովումն իրականացնել միավորումների և զորամասերի պահեստներում պահվող պաշարների հաշվին:

Հրաձգային զենքը և տեխնիկան տրվում են ըստ առանձին ամփոփագրերի, ՍՌՏ-ի հաշվառման համար պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից:

Սպառազինության պակասորդի դեպքում հայտերը ներկայացվում են բավարարող մարմնին:

Հաշվեցուցակով անհրաժեշտ ավտոմոբիլային և զրահատանկային տեխնիկայով ապահովելու համար ԲԿ-ների հրամանատարները պետք է նախատեսեն տեխնիկայի վերաբաշխում կորպուսի ներսում և ապահովեն դրա մատակարարումը զորամասեր, որտեղ ստեղծվել են գրոհային վաշտերը:

**Վաշտերի ղեկավարումն** իրականացվում է միավորումների գրոհային վաշտերի հրամանատարների միջոցով:

Աղբյուրը: Солдат Удачи